Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ե.Չարենցի անվան N12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Կերպարվեստ» առարկայի/ 2 դասաժամ / ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անց է կացվում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

-դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2026թ. հունվարի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը՝ բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

«Կերպարվեստ» առարկայի մրցույթը կկայանա 2026թ. հունվարի 19-ին, ժամը 13.^{00}-ին, « ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ե.Չարենցի անվան N 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:
Հասցեն՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր ,Շիրակացի 14/2:

Տեղեկությունների համար զանգահարել (0322)2-37-05 հեռախոսահամարով: